40. ԱՆՆՄԱՆ ՄՈՒՔԱՅԵԼ

Կէղի, չէղի, խընձ աստված աղեկ չէղի։ Կէղի թաքավոր մի, ուր կնիկ. էտոնց ավյատ-թավյատ[1] չկա։

Թաքավոր ուր կնիկ կխնթրվին աստրծուց, կասին.—Աստվա՛ծ, մեզի ավյատ-թավյատ էղնի, յոթն օր եղ ու մեղր ցրվենք։

Կիքա ղավրեշ մի, խնձոր մի կխանա, կիտա թաքավորուն, կասա.—Կտոր մը դու կեր, քու կնիկ, կտորմ էլ քու ձին ուտա, օր քուռակ էղի։ Քու ճիժ օր կէղնի, անուն չտնես, չում ես հ՚իդամ։

Ին ամիս օր կթրմի, ճիժ կէղի, ձիուն լե քուռակ կէղի։ Իրեք չորս տարի կընցնի, դրռ չկնքեն։

Թաքավոր կասա.—Դավրեշ չէկավ, բերենք մեր ճիժ կնքենք։

Կտնեն օր կնքեն, ղավրեշ կմտնա ներս։

Կասա.—Հ՚որի՞ն բելա[2] զի կկնքես։

Թաքավոր լե կասա.—Հըմալ մը իշկի, իշկի դու չէկար, ես լե կկնքինք։

Դարվեշ կասա.— Ճիժի անուն դնես Աննման Մուքայել, քուռկու անունն լե՝ Կամար-թայի։

Թաքավոր տղեն կտանա դնա ուսումնարան։ Տղեն իրեք-չորս տարի լե էնտեխ կմնա, աշխըրից, երկրից բեխաբար էր։ Մեկ օր միսով կերակուր պերին, օսկոռ խետն էր. օսկոռ թալեց, փանջարեն կոտրեց, արև զարդեց, փանշարից մտավ ներս։ Աննման Մուքայելն ասաց.—Ընձի հ՚որի՞ն չը խանեք դուս, աշխար կա, արև կա,

1 Սերունդ, զավակ (Ծ. Բ.)։
2 Առանց (ինձ) (Ծ. Բ.)։

Հըմլա պան կա, իմա՞լ ընձի չխանեք դուս։ Գացե՛ք, թաքավորին ասեք, ես կըելնիմ դուս, խերիք ա, ես չմնամ ներս։

Գացին թաքավորին ասին.—Քու տղեն կասա. «Ես դելնիմ դուս, չմնամ ներս, աշխարք կա, արև կա»։

Թաքավորն ասաց.— Ինչ կանդար օր ճանի խաղցող, բըռի՝ խաղցող, ձիավորի խաղցող, սաղ զարկող կա, պըտի ըլնի դուս, իմ տղեն տեսի, տեսնիմ որ մեկին կխավնի։

Թաքավորի տղեն ա, խանեցին դուս, խեր ըսկսավ եղ ու մեղր ցրվել։ Տղեն բանի չխավնավ, ձիավորի մինակ խավնավ։ Տղեն ձի հ՚ուզեց խեծնելու։

Թաքավոր ճամփեց ուր Կամար-թային, տղեն խեծավ, խեծավ խառ տվեց, պառավմ՝ էկավ էն դեխեն, եղ ու մեղր կար ամնի մեջ, տղեն ջրինդով զարկեց ամնին, աման կոտրավ, եղ ու մեղր թափավ։

Պառավն ասաց.— Է՜յ, թաքավորի ․ողա, չը կիմիշիմ անիծեմ, մեկ օրթի ես, իրեք չարեքի դուլ մաշիս։

Տղեն հ՚ընգավ քիթ ու պերնի վրեն, ուշքն հ՚ընցավ։

Էկան ամեկ թարաֆեմ, տղին խանին վեր, թաքավորն ասաց.— Տեսեք ի՞նչ զուզա իմ տղեն։

Գացին հարցուցին.—Ի՞նչ գուզես։

Ասաց.—Իրեք չարեք գուղեմ։

Ջը գիտեն «իրեք չարեք» ի՛նչ է, ի՛նչ չէ։

Կբերեն օսկի իրեք չարեքնոցմ՝ կուտան տղի ծեռ, տղեն կըզարկա տվողի քիթ ու բերան, կասա.—Աղջիկ իրեք չարեք գուզեմ, դուք օսկի կբերեք, ես ի՞նչ անեմ զօսկին։

Լ՚ըդախ էկավ ասաց.—Նանե՛, ափո՛, ծեր խաց ու ճուր խալալ էնեք, իշտե ես կէրթամ, խուռջիմ օսկի, Կամար-թային կիտաք ընձի, ես կէրթամ։

Աննման Մուքայել խեծավ ձին ու խուռջի օսկին թալեց վրեն, ընգավ ճամբախ գնաց։ Իրեք մարթ էնտեխ կանած ին, կռիվ կէնին հ՚իրարու խետ։

Աննման Մուքայել ասաց.— Ինչի՞ կռիվ կէնեք։

Էն լե վերցուց ասաց.— Էդա իրեք պանի վրեն կռիվ կէնինք, մեկը՝ կասկըբեին, մեկ՝ սեջադեն, մեկ լե՝ աներևութ քըլող։

Աննման Մուքայել խարցուց.— Էտոնց խունարն[2] ի՞նչ է։

Էնոնք լե կվերցուն կասին.—Սեջադեն օր կապես մեջք, ասես ընձի դոր գիր՝ էն դեխ քեզի կդնա, քըլող լե օր դնես քու գլուխ, ան-

1 Մանկական խաղ (Ծ. Բ.)։

2 Շնորհք (Ծ. Բ.)։

երևութ կէղնիս, կասկըրեկի[1] խունարն էլ, օր դնես ծովու վրեն, կէղի կարմունջ։

Թաքավորի տղեն կվերցու իրեք քար, կառնի ուր ձեռք, կթալա, կասա.—Վո՛ն օր էս քար շուտ առավ էկավ, սեջադեն կիտամ ընդոր, վոն օր հ՝անգան էկավ՝ քոլոզ կիտամ, վո՛ն օր հ՝ետև էկավ՝ կասկրեկ կիտամ ուրին։

Էնոնք թորկին գացին քարերու հ՝ետև։ Աննման Մուքայել առեց սեջադեն կապեց ուր մեջք, քոլոզ դրեց ուր դլոխ, կասկրեկն առավ ուր ձեռք, ասաց.—Իրեք-չարեք աղչկա մոտ զիս դնես։

Սեջադեն տարավ դրեց Իրեք-չարեք աղչկա մոտ։ Աներևութ քոլոզ լե գլուխն ա, մարթ չտեսնա ուրին։ Ջուր իրիկուն օր էղավ, Աննման Մուքայել քոլոզ վերցուց՝ ղինք տվեց աղչկան շանց։

Իրեք չարեքն վերցուց ասաց.—Կնա՛ դեն, ես Աննման Մուքայելի մաշուղն եմ։

Աննման Մուքայելն էլ ասաց.—Կնա դեն, ես լե Իրեք չարեք աղչկա մաշուղն եմ։

Էն օր էնման կասա, գիմնան, կճանչնան զիրար։

Կասա.—Ապա իմա՞լ էնենք, իմ խեր ու մեր ընձի չիտան քեղի։

Կասա.—Ես կառնիմ փախնիմ քե։

Կասա.— Կանա՞ս, ես մե թաքավորի աղչիկ եմ, իմ խոր ասքար շատ կա, իմա՞լ կառնես կփախիս։

Ասաց.—Քըզի կառնիմ փախիմ։

Կասա.—Սեջադա, քըզնե գուզեմ, ընձի ու Իրեք-չարեք վերցես դնես յոթ ծովու կղզուն։

Սեջադան կվերցու զԱննման Մուքայել ու զԻրեք-չարեք, աչք բանալուն խփելուն կտանի դնի յոթ ծովու կղզուն։

Էն տեխեն Աննման Մուքայել կասկրեկն կթալա վըր ծովուն, կէղի կարմունջ, հ՝ընցնին։

Ըստեխ դառնանք Իրեք-չարեքի խոր՝ թաքավորի վրեն։

Թաքավոր կասա.—Վո՛ն օր իմ աղչիկ պիրա, կիտամ ուր տղին։

Պառավմ՝ էն դեխեն գիքա կասա.— Թաքավոր ապրած, իզին տուր, ես կէրթամ քու աղչիկ կպերեմ։

Պառավն ա, հ՝ելավ խեծավ ծծում ու գնաց։ Ծծում թալեց ծովու երեսին ու գնաց։ Գնաց խասավ յոթ ծովու կղզուն, հ՝ելավ դուս, խասավ Իրեք-չարեքի դռան, կանչեց ասաց.—Իրեք-չարե՛ք, դուռ բաց։

---

1 Կասկարա՝ չորս ոտանի կրակարան, նաև մանկական խաղի մի տեսակը (Ծ. Բ.)։

Իրեք-չարեքն ինքն ուրին ասաց՝ «Պառավ օր գա, խաթա ա, բալա ա, գուռ չրանամ»։

Էկավ Աննման Մուքայել էնգեխեն, ասաց.— Իրեք-չարե՞ք, Իրեք-չարե՞ք, դուռ բաց, էտ պառավ թրխ գա ներս։

Էն լե ասաց.—Պառավն օր գա, խաթա յա, մը բերա, վնասութեն կքաշես էտորից։

Աննման Մուքայել պառավն առեց ներս։ Պառավ շաբաթ մի մնաց ներս, դարուբար[1] ավլեց, խորթեց, թամուզ պախեց։

Աննման Մուքայել ասաց.— Տեսի՞ս ինչ թամուզ պառավմ՝ էչառնիր ներս։

Աննման Մուքայել տնեն թորկեց գնաց օլորդելու, պտռտվելու։

Պառավն ասաց.—Իրեք-չարեք, հ՝ելի էրթանք ծովու պակրներ, թամաշա էնենք էն դարուբար։ Գացին ծովու պակրներով, պառավն ասաց.—Էնա տեղ ծծում կա, էրթանք թամաշա էնենք, տեսինք ի՞նչ կա մնչ։

Պառավն իշկաց ծծումի մեջ, ասաց.—Աղութ, զմրութ կա մեչ, Իրեք-չարեք, իշկա՛, իշկա՛, տես։

Իմալ օր կզի ծծմի մեչ կիշկա, կթալա ծծմի մեչ զԻրեք-չարեք, պերան կկոծա, կթալա վրը ծովուն կէրթա։ Թալելու քիմին Իրեք-չարեք կծուի մեչ, խելք կթալա։

Պառավն կտանա զէտ Իրեք-չարեքին, կխանա ուր խոր մոտ։

Թաքավորին կասա.—Թաքավոր ապրած, քու աղչիկ բերի, բալե[2] ծուեր ա։

Ըդախ թաքավորի աղչիկ կտանին մտուն տուն մի, դուռ փակեն վրեն, խաց ու ճուր էրթըքեն կիտան։

Դառնանք Աննման Մուքայելի վրեն։

Աննման Մուքայելն է, կիքա էնտեխեն տեսի օր նա՛ պառավ, նա՛ Իրեք-չարեք, չի կա։ Աննման Մուքայել կելնի քոռ փոշման թորկի կէրթա։ Սեշադեն լե կապերա Իրեք-չարեքի մեճաց։ Աննման Մուքայելն ա յոլ ու ռեվան էղավ, հ՝ընգավ ճամփու խետ գնաց։ Գնաց տեսավ օր ճամփու վերեն քոշկ մի կա։ Աննման Մուքայել կզարկա, բլու, մտնա ներս, աղչիկ մի կտեսնա ներս։

Աղչիկ կասա.—Հ՝որի՞ն էմլա էնեցիր, իմ յոթ ախպեր գացած վեր ինձի կռիվ։

---

1 Տուն ու տեղ (Ս. Բ.)։

2 Միայն, սակայն (Ս. Բ.)։

Քու ախպոր ճամբախ դո՞ր վեր ա, տու՛ իմ շանց, ես էրթամ էն տեխ։

Աղչիկ տվեց շանց, տառցավ էկավ տուն։

Աննման Մուքայելն ասաց.— Կէրթամ բարև կիտամ, որ մեկն օր առավ իմ բարև, ընդոր թարաֆեն կէղիմ։

Խասավ կովու տեխ, բարև տվեց, շատ ասքարն չառավ, յոթ ախպերն առան ընդոր բարև։

Աննման Մուքայել զարկեց ղկոշում, հ՚ըմեն զարկեց։

Ըսդախ էն յոթն ախպեր դարցան իրարու տանըշմիշ էղան, ասին.—Ի՞նչ իտանք էդա մարթուն օր լայեղ էղնի, մեր քուր իտանք էտոր, օր լայեղ էղնի։

Պստիկ ախպոր կասեն.—Դնա՛ հ՚առեճ, խաց, կերակուր տուր էփել, մսաֆեր կիքա։

Ախպեր տեսնի օր պատ բլուկ ա, համա թողնի դառնա ախպըրտոց մոտ, կասա.—Մեր տան պատ բլուցած է, չըմ գիտի, մեր քուր տարած, չէ՝ թորկած։

Աննման Մուքայել կասա.— Մը՛ քըրբոտիք[1] ես եմ էրեր եմ, ծեր քուր մարթ չը տարեր ա։

Կուրախնան, կընգին ճամբախ կիգան[2]։

Խասան տուն, խաց դրեցին հ՚առեճ կերան։

Ախպերներ Աննման Մուքայելին կասեն.—Մեր քուր կիտանք քեղի, քու լայեղ մենակ մեր քուր կտեսնանք, էլ ուրիշ բան չունինք։

Աննման Մուքայել կասա.—Ծեր քուր թրխ մնա ըստեխ, ընձի մուրազ կա, էրթամ իմ մուրազին հասիմ նոր հ՚իգամ ծեր քուր տանիմ։

Աննման Մուքայել բարև մնա էղավ էտոնց մոտեն, հ՚ընգավ ճամբախ, էկավ։ Էկավ, խաս բախչիմ՚ ռաստ էկավ։ Նուռ մի կփըրցու ուտա, աղչիկմ՚ էն տեխեն տեսի զէտ Աննման Մուքայել, աչք կթալա Աննման Մուքայելին, կասա.—Ընձի չառնի՞ս։

Կասա.—Կառնիմ, հ՚որի՞ն չըմ առնի, խընց քըզի աղե՞կն պիտի առնեմ։

Աղչիկ զԱննման Մուքայել կանա խնձորմ՚ կթալա ուր չեբ։ Կը թալա ուր չեբ օր ուր դև խեր չիգա զԱննման Մուքայել զայ էնա։

Դևն էկավ էն դեխեն, ասաց.—Մարթ, մարթախոտ կիգա։

---

1 Ջայրանալ (Ս. Բ.)։

2 Բնագրում՝ էկավ (Ս. Կ.)։

Աղչիկն ասաց.—Սարեն, ձորեն տու կիքաս, մարթ, մարթախոտ քեղնե կիդա։

Դեն ասաց.—Քու ջեբ խնձոր կա, մարթն էրեր ես խնձոր, թալեր ես քու ջերն, դուրս խան, զայ չըմ էնեմ, հ'երդվա։

Աղչիկն խնձորն խանեց դուրս, զարկեց դետին, էղավ Աննման Մուքայել։

Աղչիկն ասաց.—Քըզի կառիմ։

Աննման Մուքայել ասաց.—Ընձի մուրազ կա, խասիմ իմ մուրազին, նոր քեբին[1] կտրեմ։

Կէրթան բաղչի մեջ պըտոտվին, քեֆ կէնեն։

Էն տեխ նուռ մի կիսա կուտա, ախ կքաշա Աննման Մուքայել, զիրեք-չարեք կընդնի միտք։

Աղչիկ կըռըկի կէրթա նստի մեկ թարաֆ, Աննման Մուքայելն էլ՝ մեկ կողմ։

Դեն իմացավ թե էտոնք խռովան իրարմից, շուտ էկավ տուն։

Դեն ասաց.—Ազչի՛կ, հ'որի՞ն խռովեր ես Աննման Մուքայելից։

Ասաց.— Ըպա ինչի՞ ախ կքաշա։

Խեր կասա.—Իրեք-չարեք իտոր նշանածն ա, մոտեն տարած են, ծոեր ա, հ'ընդավ միտք՝ դուց ա՞խ քաշեց։

Դև կասա Աննման Մուքայելին.—Քըզի կուզե՞ս օր խասում Իրեք-չարեքի մոտ։

Էն էլ կասա.—Ըպա չըմ հ'ուզե՞մ։

— Օր հրմալ ա, լուսումութ կելնիմ, դու կանաչ շոր խադա, կանաչ շոր կապա քու զլուխ։ Ես քըզի դեղ կիտամ, ես չըմ մտի քաղքի մեջ։ Ես էրկու իրեք խոքի կծոըցում, դու դեղ տու սաղցու։ Թաքավոր օր տեսավ քանիմ մարթ սախցուցիր՝ քեղի կկանչա ուր Իրեք-չարեք լե սաղցուս։

Դեն առավ Աննման Մուքայելն տարավ իշուց քաղքի մեջ։ Էրկու իրեք խոքի դեն ծըոըցուց, Աննման Մուքայելն սաղցուց։

Գացին թաքավորին ասեցին.—Թաքավոր ապրած կենա, հրմալ Շեխմ՝ էկեր ա, ինչ ծուռ, հ'ընդնավոր էղի՝ կսաղցու։

Թաքավոր ճամփեց զէտ Շեխ բերաց, ասեց.—Արի զիմ աղչիկ սաղցու. թաքավորութենի կեսն կիտամ քե։

— Վեր իմ աչիչ, կսաղցում։

Էնդախ օր Աննման Մուքայել մտի ներս, Իրեք-չարեք կսաղնա։

---

1 Մահմեդական պսակադրություն (Ս. Բ.)։

Պառավ կիգա էն դեխեն կասա.—Թաքավոր կավլ[1] էինք, կառեմ իմ քաշալ աղին։

Աննման Մուքայել պառվուն կասա.—Կառիմ էրթամ բաղնիք լվանամ, արի տար քու տղին։

Կառի ղպառավ ու ղԻրեք-չարեք կէրթա։

Ճամբախ խասան ծառիմ մոտ, Աննման Մուքայել էրկու ծառ կբերա իրար մոտ, պառավ կկապա ծառերուց, կթորկա, պառավ կեղի էրկու շաղք[2]։

Կառնի Իրեք-չարեք կէրթա բաղնիք լողկըցու։

Կառնի սեջադեն, կասա.—Սեջադե՛, քըղնե կուզեմ ընձի, զԻրեք-չարեք առնես դևի տուն դնես։

Սեջադեն կվերցու զէրկուս, տանի դնա դևի տուն։

Կմնա քանիմ օր, կասա.— Դե կացեք իրարու կուշտ, ես կէրթամ մեկել կնիկ լե պերեմ։

Կնստի սեջադի վերեն, կխասի յոթն ախպոր մոտ, կասի.—Ես իմ մուրազին խասա, տվեք ձեր քուր առնիմ էրթամ։

Կառի աղչիկ, բարև-մնա կէղի, կառի դա։ Կիքա իրեք կնիկ մեկ տեխ են։

Դև կթորկա էրթա սար։ Աննման Մուքայել, իրեք կնիկ կէրթան խաս-բախչեն, Աննման Մուքայելն նուռ մ'օր կիսեց, ա՜խ քաշեց։

Ըսդախ կըռրկին իրեք լե նստին ամեկ դեխով մի։

Կասեն.—Մըզի չը խավնի՞ս, օր հըմլա ա՜խ քաշեցիր։

Դև էն տեխ կիմնա, օր թե իրեք լե ըռրկած են։

Իրիկուն կիքա դև տուն, կասա.—Աղչկնե՛ր, դու հ'որի՞ հըմլա ըռրկեր եք Աննման Մուքայելից, Աննման Մուքայելի խեր ու մեր Աննման Մուքայելի հ'ապով լացած ա, աչկեր քոռցած ա, ըստեխ խորոխպերն վերցի թալի բաղնիքի տանիք, ինք նստի թախթի վըրեն։ էն «ա՜խ» չքաշա, ըպա վո՞ն քաշա։

Դև կասա Աննման Մուքայելին.—Կուզե՞ս քըզի խասցում քու խորն ու մոր։

Կասի.— Էլի լուսումութ, քըզի դեղ կիտամ, առ էրթանք իմ խետ, ես չմտիմ քաղքի մեջ, քու խերն ու մեր բաղնիքի տանիքն են, դեղ թալա աչքեր թըխ սախնա։

Հ'ելան գնացին Աննման Մուքայելի հոր քաղաք։

---

1 Պայման (Ս. Բ.)։

2 Կտոր (Ս. Բ.)։

Աննման Մուքայել հ'ելավ էկավ խոր ու մոր մոտ։ Խեր ու մեր վերցին ասին. «Ա՜խ, Աննման Մուքայելի խոտ էկավ»։

Խերն ասաց.— Էտ հ'ուստե՞ն էկավ, ինչ գիտեմ մեռի, ապրի։

Աննման Մուքայել համան դեղ ցըպնեց աչքեր։ Խերն ու մեր սաղցան։

Գնաց միս ու խաց առավ էկավ, բերեց տվեց խորն ու մոր, կերան, անոթի ին։

Աննման Մուքայելն խարցուց.— Ափո՜, քու թուխթ վո՞ն առի քու ծեռնեն։

Ասաց.— Քու խորոխպերն առի, ղի թալե տուն։

Ասաց.— Կանի էրթամ իմ խորոխպոր մոտեն հ'ուզեմ, տեսնանք կիտա՜, չի տա՜։

Գնաց խորոխպոր մոտեն թուխթն հ'ուզեց, խորոխպերն ասաց.— Ջրմ իտամ, ես կճանչնա՞մ, դու վո՞ն ես։

Ըսդախ դևն կժրխշա հ'օդեն։

Խորոխպեր վախեցավ, հ'ելավ հ'օդից ասաց.— Կա՜նի, կա՜նի, ես կելիմ։

Աննման Մուքայել տարավ զխերն ու մեր տրեց թախթ, հ'ելավ գնաց զիրեք կնիկ լե բերավ, նստավ ուր խոր ու մոր մոտ։

Էնոնք խասան ուրենց մուրազին, դու լե՝ քուն։